



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_ 2012 թ.

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանին  
հասցե՝ ք.Երևան, Սուվորով 14/2 տուն  
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետ  
պարոն Ա.Սարգսյանին

Կից ուղարկվում է Ձեր 05.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի  
գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/4 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.01.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 05.01.2012թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 16.12.2011թ. թիվ 2110451 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 05.12.2011թ. թիվ 2110451 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 09.12.2011թ-ին կազմվել է թիվ 2110451 ստուգման ակտի նախագիծը, իսկ 16.12.2011թ-ին՝ թիվ 2110451 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ՝ Խաչատուր Խաղիշյանի կողմից <Խաչատրյան Վարդիթեր> Ա/Ձ-ին պատկանող ք.Երևան, Նար-Դոս 4 հիվանդ. շենք հասցեում գործող խանութից 08.12.2011թ-ին ժամը 16-55-ին կատարվեց վճարում 25000 դրամի չափով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողի կողմից գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17-20-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 25000 դրամը, ժամը 17-20-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 17-21-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 25000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին <<հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի գանգատում մասնավորապես նշված է.

Հարկային ստուգման ժամանակ կատարվել է ոչ իրավաչափ գործողություններ:

1. Համաձայն Արաբկիրի ՀՏ տեսուչներ Ա.Պողոսյանի և Է.Հարությունյանի 08.12.2011թ. արձանագրության, հ/տ Խ.Խաղիշյանի կողմից պատվիրվել է դուռ 135000դր արժողությամբ, որի համար կանխիկ վճարվել է 25000 դրամ:

Հայանում եմ, որ հարկային տեսուչների կողմից ուղարկված արձանագրությունը կազմվել է խանութի սահմաններից դուրս՝ ոչ իմ ներկայությամբ, և հնարավոր չէր <բաձրաձայն> ընթերցել:

2. թիվ 2110451 հանձնարարագիրը ներկայացնելիս հսկիչ գնորդ Խ.Խաղիշյանը խանութում չի եղել:

3. Գնում չէր կատարվել, մինչդեռ հարկային տեսուչը պնդում էր չգնված ապրանքի համար ՀԴՄ կտրոն, որը գրվել է իմ կողմից հանձնարարագրի մեջ:

4. 25000 դրամ մուտքագրվեց ՀԴՄ հարկային տեսուչներ Ա.Պողոսյանի և Է.Հարությունյանի կողմից:

Ավելին, հարկային տեսուչներն առաջարկել են միասին գնալ Արաբկիր ՀՏ արձանագրությունը կազմելու և ստորագրելու համար, քանի որ հսկիչ գնում կատարող Խ.Խաղիշյանը հարկային տեսչությունում է: Մինչդեռ ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.6-ի կետի համաձայն՝ «արձանագրությունը ստորագրում են հսկիչ գնում կատարող անձիք և տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վճարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը»: Վերոնշյալ դեպքում 08.12.2011թ արձանագրությունն անհապաղ չի կազմվել հարկային ստուգման՝ հսկիչ գնում կատարելու վայրում և առավել ևս անմիջապես չի ստորագրվել հսկիչ գնում կատարող անձի կողմից այնտեղ չլինելու պատճառով, ինչը նշանակում է, որ հսկիչ գնումների անցկացման օրենքով սահմանված կարգը խախտվել է հարկային տեսուչների կողմից: Արձանագրությունը կազմվել է ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2 մասի համաձայն վերադասության կարգով քննել բողոքը և անվավեր ճանաչել ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային -մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով) լսելով Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 05.12.2011թ. թիվ 2110451 հանձնարարագրի Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակալային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, հետևապես գանգատում բերված այն պնդումները, որ խախտվել են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի դրույթները, հիմնավոր չեն:

Քննարկման ընթացքում ավագ հարկային տեսուչ Խաչատուր Խաղիշյանը նշեց, որ իր կողմից Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանին պատկանող ք.Երևան, Նար-Դոս 4 հասցեում գործող խանութում 08.12.2011թ-ին ժամը 16-55-ին կատարվել է վճարում 25000 դրամի չափով: Վճարումը կատարվել է կանխիկ դրամով, սակայն վաճառողի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Մասնավորապես, ավագ հարկային տեսուչ Խաչատուր Խաղիշյանի կողմից պատվիրվել է դուռ, որի արժեքը կազմել է 135 000 դրամ: Խաչատուր Խաղիշյանի կողմից վաճառողին կանխիկ վճարվել է 25000 դրամ որպես կանխավճար, սակայն վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Որից հետո խանութ մուտք են գործել հարկային տեսուչներ Ա.Պողոսյանը և Է.Հարությունյանը ու համապատասխան ստուգողական գործողություններով հիմնավորել են վերոգրյալ խախտման փաստը:

Վաճառողը՝ Վրեժ անունով, հանդիսացել է Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի ամուսինը: Հարկ է նշել նաև, որ վաճառողի կողմից վճարված գումարի դիմաց տրվել է ստացական, որում նշված են վաճառողի (Վրեժի) հեռախոսահամարները, վաճառվող ապրանքի ընդհանուր գինը, վճարված կանխավճարի չափը, ինչպես նաև վճարվելիք գումարի վերջնական չափը: Հանձնաժողովին ներկայացվեց հիշատակված ստացականը:

Քննարկվող դեպքում վաճառողի կողմից ստացականի տրամադրման փաստն ապացուցում է Խաչատուր Խաղիշյանի կողմից որպես կանխավճար վաճառողին 25000 դրամ վճարելու հանգամանքը:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ խախտման արձանագրման պահին վաճառողն ընդունելով խախտումը սկսել է գրել բացատրություն, սակայն հետագայում փոխել է մտադրությունը և պատռել այն: Ընդ որում, վաճառողի կողմից ստուգումն իրականացնող անձանց հասցեին հնչեցվել են անհարգալից արտահայտություններ:

Խախտման արձանագրման պահին Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանը ներկա չի գտնվել:  
Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանը խանութ է այցելել ավելի ուշ, իր ամուսնու կողմից հեռախոսով տեղեկացվելուց հետո:

Քննարկվող դեպքում խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որի համար ղեկավարվելով <<Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով կիրառվել է նույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 16.12.2011թ. թիվ 2110451 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:  
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ